Հայտարարություն

Մրցույթ՝ <<ՀՀ Արարատի մարզի Հայանիստի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում ֆիզկուլտուրայի (9 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների խումբ, 3 դասաժամ), երաժշտության (2 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), ինֆորմատիկա (11 դասաժամ), հայոց լեզու և գրականություն (11,5 դասաժամ), Իմ հայրենիք (3 դասաժամ), աշխարհագրություն (14,5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանª աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 18-ից մինչև սեպտեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 12:00-ից 18:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **հոկտեմբերի 4-ին՝ ժամը 14:00-ին,** <<ՀՀ Արարատի մարզի Հայանիստի միջնակարգ դպրոցում>> ՊՈԱԿ-ում: Հասցեն՝ գ. Խաչփար, 5-րդ փողոց 15-րդ շենք: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 66-66-25 հեռախոսահամարով: